

**«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/2**

**5 մարտի 2014 թ.**

Քննարկվեց «Իզոտոն» ՍՊԸ 24.02.2014 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 14.02.2014 թ-ի թիվ 250301 որոշման դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 14.02.2014 թ-ի թիվ 250301 որոշման համաձայն «Իզոտոն» ՍՊԸ տնօրեն Հայկ Իսախանյանը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182.1 հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 250.000 դրամ:

**«Իզոտոն» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

2013 թ-ի դեկտեմբերի 27-ին «Իզոտոն» ՍՊԸ-ն ստացել է նամակ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ պարոն Ռ.Գալոյանից, որի վրա բացակայում է նամակի գրանցման ամսաթիվը և համարը, որին կից ուղարկված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ալավերդյանի ստորագրությամբ թիվ 1008580/1 հանձնարարագիրը՝ «Իզոտոն» ՍՊԸ-ում բյուջեի նկատմամբ ֆինանսատնտեսական վերստուգում նշանակելու մասին:

Համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4.4 հոդվածի նույն տնտեսվարող սուբյեկտում նույն ժամանակաշրջանի համար կատարվող պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ցանկացած ստուգում համարվում է կրկնակի ստուգում՝ բացառությամբ նույն օրենքի 3.1 հոդվածի 5-րդ կետով սահմանված ստուգումների ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նշանակված ստուգումների դեպքում՝ հետաքննության մարմինը կամ քննիչը՝ պատճառաբանված որոշմամբ, փոփոխման մասին գրավոր տեղեկացվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին՝ նրան ներկայացնելով նախկին հրամանին կամ հանձնարարագրին կից նոր հրամանը կամ հանձնարարագիրը:

Հաշվի առնելով, որ խախտվել է ստուգումների մասին ՀՀ օրենքն ընկերությունը 2013 թ-ի դեկտեմբերի 28-ին պատասխան նամակ է ուղարկել Ռ.Գալոյանին, որով պահանջել է համապատասխան փաստաթղթերի կրկնօրինակները, քանի որ խախտվել է «ՀՀ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների պահանջներն ընկերությունն արգելում է ստուգում անցկացնել:

Ընկերությունը 2014 թ-ի հունվարի 9-ին դիմել է ՀՀ Նախագահին և ՀՀ վարչապետին խնդրանքով ուսումնասիրել նամակում նշված փաստերը, անվավեր ճանաչել 26.11.2013 թ-ի թիվ 1008580/1 վերստուգման հանձնարարագիրը:

22.01.2014 թ-ին ընկերությունը դիմել է նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահին հաշվի առնելով, որ ՕՀՎ 31-րդ բաժնի աշխատակիցներ գլխավոր օպերիվազոր է.Հակոբյանի և ավագ օպերիվազոր Գ.Սիմոնյանի կողմից Ընկերության նկատմամբ կատարվել է ոչ օրինաչափ գործողություններ՝ նրանք ներկայացրել են կեղծ արձանագրություն խոչընդոտելու վերաբերյալ, որի վրա թվագրված է 15 հունվար 2013 թ-ի ամսաթիվը:

Այնուհետև ստացվել է ՀՀ ՊԵԿ Նախագահի տեղակալ Ռ.Գալստյանի 11.02.2014 թ-ի 14/14.1/1459-14 գրությունը հետևյալ բովանդակությամբ. «Ի պատասխան Ձեր 13.01.2014 թ-ի ՀՀ Նախագահին, ՀՀ Վարչապետին և 29.01.2014 թ-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահին ուղղված գրությանը հայտնում եմ, որ գրությունում բարձրացված հարցերը լիարժեք ուսումնասիրման նպատակով նյութերը ուղարկվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային ծառայության մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողով: Արդյունքների վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կտեղեկացվի»:

Փետրվարի 14-ին, ժամը 16:00-ին ընկերության տնօրենը ներկայացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության հայցային աշխատանքների հսկողության բաժնի իրավաբան Կ.Կարապետյանի մոտ (համաձայն ծանուցագրի), ներկայացրել է վերը նշված փաստերը, սակայն կայացվել է 14.02.14 թ-ի թիվ 250301 որոշումը:

Ընկերությունը գտնում է, որ 14.02.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 250301 որոշումն անհիմն է և ենթակա է վերացման:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Իզոտոն» ՍՊԸ տնօրենի և ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 31-րդ բաժնի աշխատակիցների բերված փաստարկները, ռաումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից 26.11.2013 թ-ին հրապարակվել է թիվ 1008580/1 հանձնարարագիրը (այսուհետ նաև հանձնարարագիր) «Իզոտոն» ՍՊԸ-ում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում կատարելու վերաբերյալ: Հանձնարարագրի հրապարակման համար հիմք է հանդիսացել «Իզոտոն» ՍՊԸ-ում վերստուգում նշանակելու մասին 21.10.2013 թ-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության 1-ին բաժնի ավագ հետաքննիչ Կ.Խանջյանի որոշումը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է մեջբերել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հետևյալ դրույթները:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի «ժ» կետի համաձայն. «Վերստուգումներ կարող են անցկացվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

...

ժ) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան վերստուգում նշանակելու դեպքում: »:

Իր հերթին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի համաձայն. « Հետաքննության մարմինը՝

...

15) պահանջում է կատարել վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ. »:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության 1-ին բաժնի ավագ հետաքննիչ Կ.Խանջյանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով իրեն վերապահված

իրավասությամբ, կայացրել է «Իզոտոն» ՍՊԸ-ում վերստուգում նշանակելու մասին 21.10.2013 թ-ի որոշումը, որը և հիմք է հանդիսացել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի «ժ» կետի համաձայն հանձնարարագրի հրապարակման համար:

Ինչ վերաբերվում է «Իզոտոն» ՍՊԸ տնօրենի այն պնդմանը, որ Հանձնարարագրի համաձայն ընկերությունում նախատեսվում է կատարել ֆինանսատնտեսական գործունեության վերստուգում, որը կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության վարչապետի գրավոր հանձնարարությամբ, ապա նշվեց, որ այն հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Հանձնարարագրով նախատեսված է «Իզոտոն» ՍՊԸ-ում կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում, որը ոչ թե համալիր ստուգման տեսակ է, որը ուղղված տնտեսավարող սուբյեկտի ամբողջ ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավիճակը պարզելուն, այլ՝ թեմատիկ՝ ուղղված տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելուն: Մասնավորապես, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն. «4. Ստուգումները կարող են լինել թեմատիկ՝ ուղղված տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելուն, կամ համալիր՝ ուղղված տնտեսավարող սուբյեկտի ամբողջ ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավիճակը պարզելուն: Թեմատիկ են հարկային, մաքսային, պարտադիր սոցիալական ապահովության, բնօգտագործման, բնապահպանական և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումները, պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումները, գործունեության առանձին տեսակի իրականացման լիցենզիայի հիման վրա իրականացվող գործունեության ստուգումները, ...»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ գանգատում բերված փաստարկը՝ Հանձնարարագիրը «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ հրապարակված լինելու վերաբերյալ, հիմնավոր չէ: Այսինքն, «Իզոտոն» ՍՊԸ տնօրենի ներկայացված այն փաստարկը, որը հիմք է հանդիսացել ընկերությունում իրականացվելիք ստուգումն արգելելու համար, հիմնավոր չէ:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, ...: Վերջինս պարտավոր է ստորագրել 1 օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է ստուգող պետական մարմնի պաշտոնատար անձին:»:

Քննարկվող դեպքում Հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձինք, ղեկավարվելով վերոգրյալ իրավանորմի դրույթներով, Հանձնարարագրի երկու օրինակը ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ պատշաճ ձևով

(առձեռն) ներկայացրել են «Իգոտոն» ՍՊԸ տնօրենին, սակայն վերջինս հրաժարվել է ստորագրել Հանձնարարագրի օրինակը և ընդհանրապես արգելել է ընկերությունում ստուգում կատարել:

Հարկ է նշել, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182.1 հոդվածի համաձայն. «Իր լիազորությունների շրջանակում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով կամ հանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանում նրա մուտք գործելն արգելելը կամ ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների ընթացքին այլ կերպ խոչընդոտելը կամ կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրիսնապատիկի չափով»:

Հանձնաժողովի համոզմամբ, «Իգոտոն» ՍՊԸ տնօրենը չի կատարել Հանձնարարագրում ընդգրկված ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց օրինական պահանջները և իր գործողություններով խոչընդոտել է օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների ընթացքին, որի համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182.1 հոդվածի հատկանիշներով ենթարկվել է պատասխանատվության:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո Ր Ո Ղ ՈՒ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 14.02.2014 թ-ի թիվ 250301 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ առանց բավարարման:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ